



Ա.ԴԵԲԵՏՅԱՆ

ԵՐԿՐԻ



ԳՈՒՅՑՆԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

23 JUN 2009

087.1
7-30.

Ա.ԴԵՐԵՆՑ

ՄՐ

ԵՐԿՐԻ
ԳՈՒՅՑՆԵՐԸ



ՀԱՅՊԵՏՀԱՅԱ
ԵՐԵՎԱՆ
1940

2 APR 2013

16139

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 20-ԱՄՅԱԿԻ ՍՈՒԹԻՎ ԶԵՐՄ
ՍԻՐՈՎ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՀԱՐԵՆԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

А ДЕБЕНЦ
Окраски страны
Армгиз, Ереван, 1940




3635
41

Իմ բարեկամ Արարատ Արծրունին շրջագայությունների սիրահար է։ Թեև հազիվ քսան տարեկան՝ արդեն եղել է հայրենի շատ քաղաքներում ու զյուղերում։ Իր նկարչական արվեստանոցի պատերին փակցված էսքիզների և էտյուդների մեջ, մեծ դաշտանկարներում և համայնապատկերներում դուք կարող եք գտնել այդ շրջագայությունների արդյունքը—երկրի գույները։

Բայց Արծրունին ոչ միայն նկարում է։ Ինչպես խելոք տուրիստ՝ նա նոթագրել է իր ուղևորությունները։ Ես միայն երեկ ծանոթացա դրանց։ Երեկ Արծրունուն ձանապարհեցինք կարմիր Բանակ։ Մեկնելիս նա ինձ հանձնեց իր ծոցատերը։ «Կարդացեք,—ասաց, — գուցե հետաքրքրի։ ամառվա շրջագայություններիս նկարագիրն է»։

Տուն դառնալով՝ ես ուշադրությամբ կարդացի ծոցատերը։ Այդ նկարագրությունների մեջ ես նորից տեսա այն, ինչ որ իր նկարչական կտավների վրա՝ փակցըված այնտեղ՝ արվեստանոցի պատերին ու մոլբերտներին, — տեսա երկրի գույները։

Եվ ես որոշեցի պատանիների համար հրատարակել Արծրունու ծոցատերը։



ՆԿԱՐԻՉ ԱՐԺՐՈՒՆՈՒ ՃԱՅԱՏԵՏՐԸ


ՍԱՎԱՌՆՈՒՄ ԵՆՔ...

Ներքեռում երկիրը խանձում է օգոստոսյան արևը. տոթ, հրաշեկ կեսօր է: Մինչդեռ այստեղ՝ ինքնաթիռի կարինում՝ մարդիկ նույնիսկ մրսում են: Մի ուզուր կիսամուշտակը զցել է ծնկներին: Մի այլ ուզերը վերաբերուն քաշած ուսերին, գլուխը հանել է կարինից և հրաժեշտ է տալիս հարազատ քաղաքին: Ներքեռում, փեշերը բլուրների վրա փառձ, տարածվել է Երևանը: Մենք նրան նայում ենք երեք հազար մետր բարձրությունից: Տներն այլիս չեն զանազանվում: Ողջ քաքաքը նմանվում է կանոնավոր քառակուսիներով մի ահագին գունավոր հատակագծի, որ բոլորին է այգիների կանաչ պատկով: Արեմուտքից կիսաշրջան է կատարում Զանդիի արծաթազույն ժամանելու: Միայն հեռվում, քաղաքի ծայրին,

վլոքը ինչ զատկում ե արդյունաբերական արվարձանը՝
ծածկված ծխի թեթև ամպով:

Ի՞նչ գեղեցիկ է Արարատյան դաշտը:

Ես նայում եմ գեղի հեռուները: Դեմք բացվել է մի
վիթխարի համայնապատկեր՝ հսկայական դաշտը՝ Արաքսի
արծաթազոծ գոտին կապած. հեռվում շողում են Մասիս-



Մասիս լեռ

ների ձյունափառ զաղաթները. ապա՝ քառագմբեթ Արա-
գածը. այստեղ-այնտեղ երևում են Հայաստանի գյու-
ղերն ու քաղաքները՝ բոլորված կանաչ մրգաստաննե-
րով, գեղնին տպող արտերով, բամբակի դաշտերով...

Դեղի Սևան: Ժամը հարյուր քառասուն կիլոմետր
արագությամբ ճախրում է ինքնաթիւրը: Ահա մենք անց-
նում ենք գեղատեսիլ Աղմաղանի լեռնապարը և շուտով
մեր առջե բացվում է բնության մի նոր հրաշալիք – հե-

քիաթային Սևանը: Վերևից նա նման է կապտագույն,
ողորկ ապակու, ջինջ՝ ինչպես ամառնային երկինքը: Այս
ու այն կողմից շարժվում են նավերը՝ ակոսելով ջրերի
կապույտ հայելին:

Ճախրելով ափի երկա, նությամբ՝ մեր ինքնաթիւրը հե-
տրգհետե մոտենում է երկրին: Այժմ պարզ երևում են
առափնյա գյուղերի տներն ու փողոցները, դաշտերում
աշխատող հնձվորները, ձկնորսները, որ ուռկանը հանում
են լճից, և նույնիսկ ջրի տակ, ափին մոտ բուսած մա-
քուր կանաչը: Մեզմ զեփյուռը խաղում է ջրերի հետ, և
ալիքները մերթ վազում են առաջ, մերթ փշրվում՝ սպի-
տակին տալով, ասես անհամար կարապներ են լողում:

Հաճելի է այսպես երկան-երկան նայել: Բայց ինք-
նաթիւրի մոտուր փոխում ե հոփնդը. այդ վայրէջքի նա-
խանշանն է: Մի քանի քոպե ևս, նորից մի պտույտ, և
ինքնաթիւն իջնում է հողին:

Մենք հրաժեշտ ենք տալիս օդաչուին և ուղևորվում
գեղի ափը:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Ես շատ եմ կարդացել Սևանի մասին, լսել՝ ավելի
շատ: Բայց նրա հանարքը միայն տեսնելով կարելի է
զգալ: Ասում են, թե Սևանն ամենաբարձրն է մեծերի
մեջ և ամենաամեծը՝ բարձրերի: Սևանը գեղեցկուհի է,
կապուտաչյա լեռնային գեղեցկուհի:

Գեղանա լեռների ստորոտուն, ծովի մակերևույթից
1916 մետր բարձր, փոփել է նա հսկայական տարա-
ծությամբ: 1416 քառակուսի կիլոմետր. դա այնպիսի

տարածություն է, որի մի ծայրից մինչև մյուսը մարդու աչքը հազիվ է կտրում: Որտեղից ել որ նայես՝ կղզուց, թե ափից, նայես արևածագին, երբ ոսկեզույն շողերը խաղում են ալիքների հետ, թե գիշերը, երբ կիսալուստինը կոտրավում ե ջրերի մեջ, — Սևանն անեն ժամանակ գեղեցիկ է:

Մի ամբողջ օր մասնվ առափնյա վայրերում, մենք վայելեցինք ճիպ այդ գեղեցկությունները: Այժմ ինձ ավելի հետաքրքրում էր կղզին, որ բարձրանում է ջրերի մութ-կապտավուն ապակու վրա, ափից ոչ այնքան հեռու: Բայց այնտեղ գնալու էինք առավոտյան: Իսկ մինչ այդ, նստած մեր հյուրընկալի՝ իմ հին ծանոթ էլեկտրիկ-ինժեների բնակարանում, մենք զրուցում էինք ճիպ մասին:

Ես վերհիշում էի այն, ինչ երբեք Սևանի մասին կարդացել եմ:

... Այդ մեզանից շատ դարեր առաջ էր: Հազարացիք, հայոց հին թշնամիները, նորից հարձակվել էին մեր երկրի վրա: Այս անգամ նրանց առաջնորդում էր Մահմեդ Երկրորդ սուտիկանը: Ամենուրեք մահ ու ավերածություն սփռելով՝ բռնակալը հասել էր Սևան, որտեղ կղզում պահված էին հայոց գանձերը: Այստեղ էին ապաստանել և հայ իշխանուհիները:

Երեք տարի շարունակ նա պաշարեց կղզին, բայց զրավել չկարողացավ: Քանի-քանի անգամ լաստեր շինեց և մեծաքանակ զորքով շրջապատեց կղզին: Բայց հայերը քար նետող մեքենաներով ժայռեր էին գլորում լաստերի վրա և ջրասույզ անում հագարացիներին: Շատ անգամ էլ երկաթե կարթերով քաշում էին լաստերը կղզու մոտ, նավթ ածում նրանց վրա ու վառում: Ոստիկանը փորձեց երկարամյա պաշարումով սովանահ անել կղզու բնա-

կիչներին.— ալդ էլ չհաջողվեց: Հումը կտրած՝ նա ուղում էր հեռանալ երբ արաբացի մի գիտնական, որ գանվում էր նրա բանակում, խորհուրդ տվեց ծովակն արձակել:

— Ի՞նչպես թե ծովակն արձակել — զարմացակ ոստիկանը:

— Սևանը գտնվում է բարձր լեռների վրա, — ասաց արաբը: — Նրանից ելնում է չրազգան կամ Զանգու գետը: Այդ հանգամանքը ցուց է տալիս, որ հնարավոր է Սևանը պատող ափերից մինը վլցնել և դեպի շրջակա ձորերն անցք բանալով՝ ծովակի ջուրը դատարկել:

Այլպես էլ արին: Մի քանի շաբաթվա մեջ զինվորները փորեցին մի հսկայական ջրանցք և ծովակի ջուրը հոսեց դեպի շրջակա ձորերը: Կղզին ափից բաժանող տարածությունը շուտով ցանաքեց: Եվ Մահմեդի զորքն առանց գժվարության մտավ կղզի:

Երբ ես պատմեցի այս հին գեղքը, ինժեներն ասաց.

— Խելոք է եղել արաբ գիտնականը: Սևանից դուրս եկող ջրի քանակն իրոք կարելի է ավելացնել: Այժմ մենք հենց ալդպես էլ անում ենք: Բայց ոչ թե լիճը ցամաքեցնելու, այլ նրա համար, որ Զանգվի վրա ափելի շատ և ափելի հզոր էլեկտրոկայաններ աշխատեն:


Ինժեները հետզետե ավելի ոգեստում էր: Նա խոսում էր Զանգվի վրա կառուցված էլեկտրական կայանների մասին, որոնք մտնում են, արագես կոչված, Սևանի կամկադի մեջ: Նա խոսում էր Հայաստանի էլեկտրարդյունաբերության ապագայի մասին: Բայց ավելի լավ է, որ ես պատմեմ այնպես, ինչպես ինքն էր խոսում:

ՎԻԹԽԱՐԻ ԱԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐԸ

Ինժեները զբուցն սկսեց այս խոսքերով.

— Տեսել եք, թե ինչ հոյակապ է Երևանը զիշերով,
երբ նայում եք մերձակա լանջերից: Նա բոցկլտում է
շքեղ լույսերով, և ձեզ այնպես է թվում, թե աստղա-
զարդ Երկնքից մի կտոր ընկել է Արաբատլան. հովտի
այս եզերքը: Այդ Սևանն է վառվում ամեն մի Էլեկտրա-
կան լամպի մեջ:

Եղել եք գործարանում, երբ մոնտորը միացնում է
Էլեկտրոհատիչը և միանգամից հոնդում են մոտոռները,
շարժվում փոկերն ու թափանիվները: Այդ Սևանի ուժն
է հոսում գործարանի Էլեկտրական երակներով:



Էլեկտրականի աեքստիլ կոմբինատում:

Ստորեւկրյա հանքուղիներում տեսել եք, թե ինչ-
պես են գործում Էլեկտրական փորիչները: Այդ գարձլալ
Սևանն է ուժ տալիս մուրճերի հարվածին:

Սևանն էլեկտրական էներգիայի վիթխարի ակու-
մուլյատոր է:

Զանդու գետի վրա, որ լճից դուրս եկող միակ գետն
է, այժմ գործում են երեք Էլեկտրոկայաններ:


Նրանցից առաջինը կառուցվեց Երևանի մոտ՝ դեռ այն
ժամանակ, երբ Երկրում նոր էին ստեղծվել սովետական
կարգեր: Դա Հայաստանի առաջին Էլեկտրոկայանն էր:

Մի քանի տարի հետո նրա մոտ ծնվեց Երկրորդը:
Հետաքրքրական մի կառուցում է այդ ամբողջ կայանում
ոչ մի կենդանի շունչ չկա, բայց կայանն աշխատում է
դիշեր ու զօր. սեղմիր Էլեկտրական կոճակն առաջին
կայանում, որտեղից լարերը գալիս են այստեղ, միանում
մոտոռներին, և ալստեղ էլ հոնդալ կսկսեն դինամոները,
արտադրելով էներգիայի նորանոր կիլովատներ:

Զանդի Երրորդ կայանը, որ Քանաքեռգեսն է, կա-
ռուցվեց մի քիչ ավելի ուշ: Մի բանաստեղծ, գրելով
նրա մասին, իր պոեմը վերնագրել էր «Հակալի ծնունդը»:
Եվ Քանաքեռգեսն իրոք հակա է. Նա տալիս է ավելի
շատ էներգիա, քան Հայաստանի բոլոր Էլեկտրոկայանները
միասին: Իսկ այդ կայանները շատ են՝ Զորագեսը, Լեն-
գեսը, երկու Երգեսները, Շաքիկեսը. միայն գյուղական
Էլեկտրոկայանների թիվը հասնում է քառասունի:

Կարճ ժամանակի մեջ Երկիրը ցանցավորվեց Էլեկտ-
րական ցանցով, որի միջով գեղի գլուղերն ու ավանները,
քաղաքներն ու գործարաններն է հոսում մեր գետերի
ու լճերի վերածնված ուժը՝ Էլեկտրական հոսանքը:

Հայք մէջ ոչ ունեմ և սովորական տպագիր առջևում
լուսաբար ըստ ողբաց լուսաբար մասնաւոր է:




Ինժեները պատմում էր ոգևորված և լսողներին էլ
ոգևորում: Տարիների միջով ես նայում էի դեպի մոտա-
վոր ապագան և Զանգվի վրա տեսնում էլի նոր կայան-
ներ: Տեսնում էի, թե ինչպես իրականանում է հայոնի
կակառի շինարարությունը և Սևանի ողջ էներգիան, որ
հասնում է հարյուր հազարավոր ձիութուժի, գնում է դեպի
երկրի քաղաքներն ու գյուղերը:

ԶԱՐԿԵՐԱԿՆԵՐԸ

Առավոտյան ինժեների ուղեկցությամբ մենք նորից
դրսանքի դուրս եկանք: Երկար շրջում էինք լճափին:
Մասնք նաև ստորերկրյա ուղիները, ուր հենց մեր բա-
րեկամ ինժեների զեկավարությամբ կառուցվում է նոր
էլեկտրոկայանը: Ես շարունակ հարցեր էի տալիս, որոնց
ինժեները պատասխանում եր սիրով:

— Դուք շատ պատմեցիք էլեկտրոկայանների մա-
սին: Այժմ ասացեք, խնդրեմ, Սևանն ինչ ոռոգիչ նշա-
նակություն ունի:

— Օ՛, Սևանն անօրինակ ջրամբար է, — պատաս-
խանեց ինժեները: — Ամեն տարի նա 357 միլիոն խորա-
նարդ մետր ոռոգող ջուր է տալիս: Սևանն է սնում
Ղոերի ջրային սիստեմը, որն ամենամեծն է Հայաստա-
նում և ոռոգում է մոտ 18,000 հեկտար տարածություն:
Հապա էջմիածնի ջրանցքը, հապա Դալմայինը: Հապա
Նորք-Արաբկիրինը: Նրանք նույնպես ջուր են ստանում
Զանգվից, ասել է՝ Սևանից: Զանգվի աջ ափին, Վա-
ղարշապատի շրջանում, այժմ կառուցվում է ոռոգման մի
նոր մեծ սիստեմ — Ստորին Զանգվի ջրանցքը:



Կոստավը՝ Մայակովսկու անկան կոլունակություններ:

Իմ հարցը մի առիթ եղավ, որ ինժեներն իրեն հատուկ ոգևորությանը խոսեր ջրանցքների մասին առհասարակ։
Մեր երկիրը հին ջրանցքների երկիր է։ Արագածի զանջերին, Արարատյան հովտում և այլ տեղեր այսօր էլ կարելի է տեսնել հսաղարյան ջրանցքների հետքերը։ Հանդիպում են և ջրի կուռքեր։ Դա նշան է այն բանի, որ անհիշելի ժամանակներից ի վեր հայ շինականը ռողելիս է եղել իր ցանքերը։ Բայց այն, ինչ ոռոգման ասպարեզում կատարվեց սովետական տարիներին, վեր է անեն տեսակ գովետից։ Երկիրը պատվեց ջրանցքների կապույտ ցանցով։ Հիշենք Սարգարաբատի ջրանցքը, հիշենք Շիր-կանալը, Կարճեվանի ջրանցքը, Նալբանդինը, Այղբ-լճինը, հիշենք մեծ ու մանր մյուս ջրանցքները։ Այժմ մեր ցանքսային տարածությունների մեկ-երրորդ մասը ոռոգվում է։ Այն էլ ավելի կաճի առաջիկա տարիներին, երբ կկառուցվեն ծրագրված տասնյակ նոր ջրանցքներն ու ջրամբարները։ Մեր լճերի ու գետերի կենսատու ջուրը կգնա գեղի բամբակի բեղուն արտերը, գեղի ցորենի դաշտերը, գեղի այգիներն ու մրգատանները։ Եվ սովետական հողն ավելի կծաղկի։

ԹԵՓՈՒԿԱՎՈՐ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴԸ

Իմ ծանոթ ինժեների պատմածներից ես նշումներ էի անում ծոցատերիս մեջ, երբ հեռվում, լճի կապտավուն մակերեսույթի վրա, երեաց մի մակույկ։

— Զկնորաներն են, — ասաց ինժեները և անմիջական ավելացրեց։ — բայց այդ մասին արդեն թող գիտնականը խոսի։

Այս ասելով՝ նա դարձավ դեպի բարձրահասակ, շի-
կահեր մարդը, որին ծանոթացել էինք հենց նոր:

Սիրով,—պատասխանեց վերջինս:

Շիկահերը մասնագիտությամբ հիդրո-բիոլոգ էր. աշ-
խատում էր Սևան գյուղում՝ հիդրո-բիոլոգիական գիտական
կայանում, որը շատ տարիներից ի վեր ուսումնասիրում
է լճի ջրերը, նրա բուսական ու կենդանական աշխարհը:

Այդ ամենի մասին շիկահերը շատ բան պատմեց:
Բայց իմ հիշողության մեջ առանձնապես մնացել են
ձկան մասին պատմածները: Սևանում ձկների շատ տեսակ-
ներ են ապրում: Ավելի տարածված են հայտնի իշխանը,
որ պատկանում է լոսոսների ընտանիքին, և ծովածածնը:

Ենթադրում են, թե իշխանի նախահայրը Կասպից
ծովում բնակվող ազնիվ լոսոսն է: Ի՞նչպես է կարմրախայտ
և արծաթափայլ, թեփուկափոր այդ ճանապարհորդը հա-
սել այստեղ, անցնելով Կովկասյան լեռնաշխարհը: Ար-
դյոք նա կարող է վերաբնակվել մեր երկրի այլ ջրերում։
Այդ հարցերի ուսումնասիրությամբ է այժմ զբաղված
հիդրո-բիոլոգիական կայանը:

Գեղատեսիլ լճի ջրերում օրն ի ըուն լողում են
ձկնորսական նավակները: Ամեն օր նրանք հազարափոր
կիլոգրամներով որս են հանում ափ: Տարեկան՝ ավելի
քան տասը հազար ցենտներ: Հապա ի՞նչպես է, ոթ լճի
հարստությունը երբեք չի նվազում: Այդ մասին ևս շի-
կահերը հետաքրքրական տեղեկություններ հաղորդեց:
Բնական աճից բացի՝ դրան նպաստում են ձկան արհես-
տական բազմացումը: Լճի ափերին երկու ձկնաբուծարան
կա՝ Փյողակերուլաղում և Նորագուղում: Անխոնջ ձկնա-
բույժներն այստեղ ամեն տարի մինչև վաթսուն միլիոն
ձկնիկներ են աճեցնում և արձակում լինք: Այդպես էլ
լճի հարստությունը չի նվազում:

* *

Սևանի առափնյա վայրերում մեր շրջագայություն-
ներն ավարտվել էին, երբ արևն արդեն քնելու էր
գնում: Նրա վերջին շողերը, ոսկեգույն զանգուրների
նման, խաղում էին ալիքների հետ: Մենք մակույկ նըս-
տեցինք: Դեպի կղզին: Դա այնքան էլ հետու չէ: Այստե-
ղից էլ երեսում են նրա սեպաձև ափերը: «Զրի մակերե-
վույթից վաթսունհինդ մետր բարձր է», — ասում ե բիո-
լոգը: Կղզին, իրոք, ավելի շատ բլրի կերպարանք ունի:
Իսկ մեծ է մակերեսը: «Ո՞չ այնքան, — շարունակում է
նա: — Երկարությունը մի կիրունտրի չափ է, լայնու-
թյունը՝ կեսից պակաս: Ամենք՝ կղնանք, կտեսնեք»:
Ինձ հետաքրքրում են կղզու բնական գեղեցկություն-
ները, վանքը, որ կառուցել են մեր նախապատեր՝ դեռևս
իններորդ դարում, հետաքրքրում են նորակառույց շեն-
քերը, հանգստյան տները:

Մի շաբաթ ես կմնամ այստեղ: Ուզում եմ նկարել
Սևանը:

ՀՀ 41

ՄԻ ՊՏՈՒՅՑ

Սևանից վերադառնալով Երևան, ես տանը մի տոմ-
սակ գտա: Մանկական թերթի խմբագրությունը խնդրում
էր նկարների մի շարքով արտահայտել «Արդյունաբե-
րական Երևանը»: Պետք էր, ուրեմն, վերստին շրջագայելք
Բնականաբար՝ սիրով հանձն առա:





Ա. Արքույթնի արձանը Երևանում:

Մի շաբաթից ավելի շրջում էի մալրաքաղաքի գործարաններում ու ձեռնարկություններում։ Այդ օրերին ինձ համար շատ նորություններ բացվեցին։ Դուք մի զարմացեք, որ տասը տարուց ավելի ապրելով այս քաղաքում, ես քիչ բան գիտեի նրա մասին։ Մեր կյանքն ընթանում է այնպես բուռն թափով, ամեն քայլափոխում նորն այնքան շատ է, որ մի հայացքով չես կարող բոլորն ընդգրկել։ Բայց ահա ալժմ արդյունաբերական Երևանն իմ առջևն էր իր ամբողջությամբ։

Եղա սինթետիկ կառչուկի գործարանում և տեսա, հոյակապ շինարարություն։ Նա Հայաստանը կղարձնի քիմիական արդյունաբերության առաջավոր երկիր։ Բայց կառչուկի մասին ես փոքր-ինչ հետո կխոսեմ։

Եղա մեքենաշինական գործարաններում և տեսա ժամանակակից բարդ մեքենաների շինարարությունը։ Տեսա տուրբիններ ու մոտորներ, գյուղատնտեսական զանազան մեքենաներ։

— Տարին քմնի տուփի պահածո եք արտադրում, — հարցրի ես պահածոների գործարանում մի վարպետի։
— Շատ, — ժպտալով պատասխանեց նա։

Ստուգի թիվը հայտնեցին վիճակագրական բաժնում։ Ես հաշվեցի այն վիթխարի արտադրանքը, որ ամեն տարի տալիս են Հայաստանի պահածոների գործարանները՝ վերամշակելով մեր կոլտնտեսալին դաշտերի ու մրգատանների բերքը։

Հայաստանի անուշահամ դեղձի պահածոն, վարդե մուրաբան, տանձի ու ծիրանի պահածոները, Արարատական խաղողի կոմպոտը, որ ամեն տարի միլիոննավոր տուփերով արտադրվում են մեզ մոտ, հարգի են Սովետական մեծ Միության մեջ։ —

Ավելի հարզի է Հայաստանի գինին։ Նա հազարամյակների պատմություն ունի։ Ե՞րբ է հայ գեղջուկը շինել առաջին հնագույն առաջին անգամ խաղողը տրորել և դինի պատրաստել, — դժվար է ստուգ առել։ Բայց Հայաստանի գինին խմել է դեռ հույն պատմագիր և ճանապարհորդ Քսենեֆոնը, որը մեր երկրում եղել է սրանից 24 դար առաջ։ Իսկ այդ ժամանակներից ի վեր շատ բան է փոխվել գինեգործության մեջ։

Այսօր «Արարատ» գործարանում ես տեսա այդ փոփոխությունները։ Հին գործարանից, որ զատկանում էր պարոն Շուտառովին, ոչինչ չի մնացել։ Բարձրացել են նոր գինեգործարանի կորալուսները, ուր աշխատում են նոր մեքենաներ։ Արարատյան արեահամ խաղողից այստեղ ծնվում են ամենաբազմազան տեսակների ընտիր գինիներ — մուսկատ և մաղերա, կազոր և պորտվեյն, սափերավիթ և խերես, ծնվում են սեղանի գինիներ, զանազան կոնյակներ և այլ խմիչքներ։ Նկուղներում, հսկայական տակառների մեջ, ննջում են հին գինեները։ Նրանցից շատերն արգեն հիսուն-վաթսուն տարեկան են։

Ես հաշվեցի «Արարատ» տրեստի արտադրանքը։ Եթե մի օր, մեր համաժողովրդական տոնների ժամանակ ասեն, թե Սովետական Միության բոլոր քաղաքացիները մեծից մինչև փոքրը՝ պետք է կենաց խմեն «Արարատ»-ի գինուց, — «Արարատ»-ը չի վախենա. Նրա մի տարվա արտադրածը բավական կլինի 193 միլիոն բաժակ լցնելու համար։

Արդյունաբերական երևանում կատարած պատույտի ժամանակ եղան շատ գործարաններում — առաղձագործական և հրուշակալին, ծխախոտի և մակարոնի, մե-



տաքսի և կարի, մարմարի և կաշու, ապակու և մուլիտի,
կոշկեղենի և էլի ու էլի գործանրաներում:

Սիրտս թնդում էր այն ամենից, ինչ ես տեսնում
էի: Ահա թե ինչ է դարձել մեր քաղաքը: Ես հաճախ
հիշում էի մի հին ճանապարհորդի նկարագրություն-
ներում Երևանի մասին կարդացածս: Երևանն արհեստների
քաղաք է,—գրել է նա: Բայց արհեստներն էլ չափա-
զանց հետամնաց վիճակում են: Ամեն քայլափոխում
սրանք հիշեցնում են այն ժամանակը, երբ մեր կիսա-
վարենի նախապատերը նոր էին թողել իրենց անտառ-
ներն ու քարանձավները և նոր-նոր անցնում էին տնային
զբաղմունքների:

Այս տողերը գրվել են ընդամենը վաթուն տարի
առաջ: Այս, աղքատ ու խեղճ եր Երևանն այդ ժամա-
նակը Արդյունաբերություն ասածդ չկար: Հիմնական
զբաղմունքն արհեստներն էին: Կային դարբիններ ու
կաշեգործներ, պայտառներ ու որմնադիրներ, կային ներ-
կարարներ ու բրուտներ, շուրջ յոթանասուն տեսակի
զանազան արհեստների մարդիկ: Հինավուրց Զանգվի ա-
փին կաշեգործները շարում էին տակառները և նրանց
մեջ դաբաղում կաշին: Ներկարարներն աշխատում էին
մթին և գարշահոտ հյուղերում: Մի երկու կավե կճռմ՝
լի ներկերով, փայտյա հասարակ ձողեր, որոնց վրա
փաթաթում էին ներկվող կտորը,—սրանք էին այդ ար-
հեստի բոլոր գործիքները: Բրուտանոցները հանդիպում
էին յուրաքանչյուր թաղանատում: Առավոտից մինչև
երեկո աշխատում էին բրուտները, շինում կավե կճռմ-
ներ, քրեղաներ ու սափորներ:

Նույնիսկ ավելի ուշ ժամանակներում, արդեն 1900
թվականին, Երևանն արդյունաբերական տեսակետից
ուեթե առաջ չեր շարժվել: Դեռ իվառմ էին արհեստ-

ները: Գործարանային արդյունաբերությունը, որ գու-
խավորապես գինու, սպիրտների և գարեջրի արտադրու-
թյունն էր, աալիս էր տարեկան մու. 150.000 ռուբլու
արտադրանք: Որպեսզի պատկերավոր դառնա այդ թիվը,
բավական է նկատել, որ ժամանակակից Երևանի
փոքր ձեռնարկություններից մեկը, Օստրովսկու անվան
մետաղագործական արտելը, տալիս է տասներեք անգամ
շատ արագադրանք, քան քաղաքի բոլոր արդյունաբերա-
կան ձեռնարկությունները միասին՝ սրանից քառասուն
տարի առաջ:

Այդպես իւեղձ է եղել հին Երևանը: Բայց սովե-
տական արևի տակ նա վերածնվեց: Ես կալխատեմ իմ
նկարների մեջ արտացոլել այդ վերածնունդը:

Ա Բ Կ Ա Ծ

Վաղուց ես կարդացել եմ մի պատմություն, որին
հաճախ ե դառնում իմ միտքը: Այսօր էլ, այցելելով
Կիրովի անվան կառուչուկի գործարանը՝ Երևանում, ես
նորից վերհիշեցի այն:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Երիտասարդ մարդն
ուզեց գրել: Հանկարծ ինքնահոս գրիչը հարվեց-անհե-
տացավ նրա ձեռքում և թանաքը լճացավ սեղանին:
Այս ինչ էր, ուր գնաց գրիչը: Երիտասարդ մարդը ո-
չինչ չհասկացավ: Նա զարմացած ոտքի կանգնեց, բայց ա-
վելի զարմացավ և սարսափեց, երբ կայծակի պես մի բան
շոգաց իր աշխին, մարեց լույսը և վարկենապես անհե-
տացան կլեկտրոնադորդ լարերը:

Նա վաղեց դեպի դուռը: Ուզեց բացել: Բայց ան-

հետացել էր և գուան բոնակը: Հենց այդ միջոցին զգաց, թե ինչպես հալվում են ակնոցների շրջանակները, ապակիներն ընկան հատակին և փշրկեցին: Նախասենյակում վնտուեց պլաշը: Զկար: Փնտուեց կրկնակոշիկերը: Զգտավ: Նրանք նույնպես անհետացել էին, ինչպես ինքնահոս գրիչը, ինչպես դուան բռնակնու ակնոցների շրջանակները: Զարմանալի արկած: Գուցե գողացել են: Նա վազեց դեպի հեռախոսը, որ զանգահարի: Բայց հեռախոսը նույնպես վերացել էր:

Խարխափելով՝ դուրս եկավ փողոց: Փողոցն էլ գրապավ խափարի մեջ սուզված: Զկային էլեկտրոնադորդ զծերը: Լուռ էր ռադիոն: Սեղմված մինյանց, մթության մեջ շարվել էին էլեկտրոքարշի վագոնները: Ոչ մի շարժում: Նա տեսավ, թե ինչպես չքացել էին ավտոմոբիլների շիները: Այլևս չեր լսվում գործարանների առօրյա հոփնդը:

Ահեղ կատաստրոֆան համակում էր ամբողջ երկիրը... Բայց ես դեռ չեմ բացատրել, թե ինչ կատաստրոփա էր այդ:

Այդպիսի իրարանցում տեղի կունենար կյանքում, եթե մի ըուպե, ասենք՝ որևէ կախարդական զավադանի ուժով, աշխարհից վերանար կառչուկը:

Այն ամենը, ինչ ձեր աչքի առջե հենց նոր անհետացան, պատրաստված են կամ կառչուկից, կամ իրենց մեջ կառչուկ են պարունակում: Ե՛վ ինքնահոս գրիչը, և պլաշը, և ավտոմոբիլի շինը, և էլեկտրոնադորդ լարը:

Կառչուկը հաստատապես մտել է կենցաղի մեջ: Նա հարկավոր է արդյունաբերության շատ ճյուղերում: Նա գործադրում է երկրի պաշտպանության համար:

Ֆրանսացի աշխարհագիրը Շարլ Լա-Կոնդամինը, որ մեզանից յերկու հարյուր տարի առաջ, իր ամերիկյան

ուղևորությունների ժամանակ, զտավ կառչուկը, այդ բոլորի մասին չէր էլ մտածում: Նա միայն պատահականորեն կտրեց ծառի ճյուղը և տեսավ, թե ինչպես կտըրվածքից մածուցիկ հեղուկ է թափվում: «Կա-օչու», բացականչեց նսդիկը, որին նա հանդիպել էր ջունգիներում՝ Ամերիկայի ճահճուտ անտառներում: Նա հասկանում էր հնդիկի լեզուն: «Կա-օչու». ասել է՝ ծառի արցունք: Ի՞նչ զեղեցիկ անուն: Հետո ֆրանսացին փորձեց այդ «արցունքի» հատկությունները: Դա հենց առաջին կառչուկն էր: Եվ նա հայտնի դարձավ աշխարհին:

Բայց երկար ժամանակ նրա մշակույթը չեր զարգանում: Պատմում են, որ հարյուր տարի առաջ Ռուսաստանում միայն մի զույգ կրկնակոշիկ կար՝ մի պլոփեսորի մոտ: Եվ այնքան անմշակ կառչուկից, որ ձմեռը ցրտից կուչ էր գալիս, փոքրանում, և պլոփեսորը հագնելու համար նախ տաքայնում էր կրակի վրա:

Հիմա դա թվում է նույնիսկ անհավատալի: Որովհետեւ մեր երկրում կառչուկի արդյունաբերությունը զարգանում է յոթ մղոնանոց քայլերով: Միջին Ասիայի տափաստաններում աճում են կառչուկատու բույսերը: Երկրի տարբեր մասերում՝ այստեղ ու այնտեղ՝ խոյացել են սինթետիկ կառչուկի հսկա գործարաններ: Այնտեղ կառչուկ են ստանում ամենաբազմազան նյութերից:

Երևանի գործարանը մեկն է գրանցից: Երիտասարդ քիմիկոսը բացում է վարագույրը: — Ահա նա: Առանձնասենյակի պատուհանից, որ գտնվում է երրորդ հարկում, ես նայում եմ ցած: Իմ դեմ փուկել է վիթխարի հնոցների, էլեկտրական տրանսմիսիաների և

Գործարանային կորպուսների մի բազմությունն Մի ամբողջ քաղաք:

Դա Կիրովի անվան կառուչուկի կոմբինատոն է:

Մի տասը տարի առաջ այստեղ լերկ, ամայի տարածություններ էին: Հիմա՝ Երևանի արդյունաբերական սիրտը:

— Իշնենք ցած, — ասում է քիմիկոսը: — Գործարանում ավելի երկար կխոսենք:

Եվ մենք ուղերում ենք այնտեղ, ուր ծնվում է կառուչուկը:

Բարդ արտադրական պրոցեսների մի հսկա կոնվեյեր է այդ: Անցնելով այդ կոնվեյերը, մեր լեռների հասարակ կրաքարը, Դոնբասի քարածխի հետ միասին, էլեկտրականության միջոցով վերածնվում, տալիս է բոլորին նոր որակ՝ սովետական սինթետիկ կառուչուկը:


Մենք ուսումնասիրեցինք այդ հետաքրքրական կերպարանափոխությունը և տեսանք աշխատանքն այն մարդկանց, որոնք առաջ են շարժում գործարանի շուրջալից առօրյան:

ԵՐԿՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԼՈՒՍԻՆ

Ես արթնանում եմ վագոնի ցնցումից: Եվ առաջին ձայնը, որ հասնում է ականջիս՝ դետի շրջունն է:

— Դուք արդեն հասաք, Ալավերդին է, — ասում է կոնդուկտորը:

Շտապով իջնում եմ կառամատուց: Ահավոր ձորի մեջ, կես գիշերվա խավարում, վառվում են անհամար էլեկտրական լամպերը: Մի պահ ինձ թվում է, թե կոն-



դուկտորը սխալվեց: Ե՞րբ է Ալավերդին ալսօան լուր-
սեր ունեցել: Բայց հետո ամեն ինչ վերակենդանանում է
հիշողության մեջ: Սա իրոք որ կալարանի հին շենքն է:
Դեմք՝ Սահմանինի հսկա բարձրավանդակը: Լեռնաստանի
սթութիւն մեջ նրա եզրագծերը հազիվ են նշմարվում:
Չորից գալիս է գետի շրջունը: Միրելի, հարազատ Դե-
բետի շրջունը: Այս, սա Ալավերդին է: Բայց ինչպես
փոխվել է նա:

Ես քայլում եմ բանվորական քաղաքի փողոցներով
և փնտում ծանոթ վայրերը: Մեր տնակը, ահա, պետք
է որ այստեղ լիներ, այս փոքրիկ դարավանդի վրա:
Բայց նա չկա: Մի եռահարկ, ահազին շենք կանգնել է
նրա տեղը՝ լուսավոր աշքերը դարձրած ձորին: Սա ար-
դեն նորություն է: Փոքրինչ այն կողմ բարձրացել
է մի այլ շենք: Ապա՝ երրորդը: Չորրորդը: Բոլորովին
նոր փողոցներ, նոր թաղամասեր:

Հաճելի է զբունել հայրենի վայրերում: Մանավանդ
ամառային զով գիշերը: Եվ ես անցնում եմ փողոցից-
փողոց: Ամեն տեղ դիմավորում են նոր կառուցումները:
Ահա սա դպրոցի շենքն է, նա՝ շրջանային հիմնարկու-
թյունների, այստեղ խանութներն են, այնտեղ հիվանդա-
նոցը, սա բանվորական բնակարանների թուղամասն է,
նա՝ թատրոնը: Տները ողողված են էլեկտրական լույսե-
րով: Փողոցները կարգավորվել են: Այստեղ ու այնտեղ
երեսում են նորատունկ ծառերը:

Վերջին անգամ ես այս վայրերում եղել եմ տաս-
ներեք տարի առաջ. այն ժամանակ հազիվ յոթ տարեկան
էի: Եվ Ալավերդին իմ հիշողության մեջ մնացել էր
մանկական օրերի տպակորություններով — փոքրիկ, ան-
շուք ավան, կուչ եկած ձորի մեջ: Այժմ ինչպես մեծա-
ցել, ինչպես գեղեցկացել է նա:

Բայց Ալավերդում ինձ հետաքրքրում են գործա-
րանները՝ պղինձը և պղնձի մարդիկ: Ես նրանց կը-
հանդիպեմ առավոտյան:

... Գնալով պղնձաձաւուական գործարանը՝ առավոտյան
հանդիպեցի իմ կին ծանոթներից մեկին: Նա կենինյան
հանքերում լեռնախույզ ինժեներ է: Յերեկն անցկացը-
րինք միասին՝ շրջեցինք գործարանները, եղանք հան-
քերում: Ես բավական ծանոթացա պղնձարդյունաբերու-
թյանը և տեսա մարդկանց հիանալի աշխատանքը:

Ալավերդին արդյունաբերական նշանավոր կենտրոն
է: Այստեղ, երկրի ընդերքում, պահպած են թանկարժեք
գանձեր—պղինձ և այլ մետաղներ: Նրանց արդյունա-
հանումն սկսվել է վաղ ժամանակներում, ասում են՝ դեռ-
տասաներկուերոդ դարում, ով գիտե, գուցե և ավելի շուտ:
Բայց հանքային վիթխարի հարստությունները մնացել
են համարյա անձեռնմիելի: Հայաստանում սովետական
կարգեր հաստատվելու անմիջապես նախօրյակին հան-
քավայրերը շահագործում էին ֆրանսացի կապիտա-
լիստները: Նրանք ամեն կերպ կողոպտում էին Ալավեր-
դին: Բայց նրանք էլ չեին կարող սպառել ստորերկրյա-
գանձերը: Ալավերդին գրանք պահում էր իր իսկական
տերերի—սովետական մարդկանց համար:

Եվ ահա, այժմ մի քանի հազար մարդիկ—բանվորներ
ու ինժեներներ—փորում են երկրի հարուստ ընդերքը,
պղինձ հանում: Թանկարժեք հանույթը հանքերից ձուլող
գործարանն է բերվում գնացքով կամ ձիաքարշ վագոն-
ներով: Նայած թե որ հանքից է բերվում: Իսկ հան-
քերը շատ են. նրանք գտնվում են Մաղանում, Շամլու-
զում, Աղթալայում, Շահալի-Էյրարում: Հանքաքարն
այստեղ է բերվում նաև հեռավոր Ղափանից:

Վիթխարի հնոցների մեջ լուսու և Զանգեզուրի պղնձաքարը հանդիպում է Դոնբասի ածուխին։ Նրանք ջերմությամբ գրկախառնվում են։ Այդ ջերմությունն անցնում է հազար աստիճանից։ Գիշեր ու զօր ծխուն են հնոցները և նրանց մեջ պղինձը հալվում—զտվում է։ Հրաշեկ գետի նման նա հոսում է առվակներով, կաղապարվում, ձև ստանում, հետո նորից նստում գնացք, միայն թե այս անգամ ոչ թե դարձյալ գետի հանքերը, այլ գետի մեծ Միության ուրիշ գործարաններ։

Ամեն տարի հազարավոր տոններով պղինձ է տալիս Ալավերդին։ Եթե կարողանայինք հեռախոսագիծ անցկացնել երկրից մինչև լուսին, Ալավերդու մի տարվա արտադրած պղինձը դրան լիովին կրավարարեր։ Բայց այդ բանը մենք թողնում ենք ապագայի մարդկանց։ Իսկ Ալավերդու պղնձից առայժմ պատրաստում ենք զենքեր ու զրահներ՝ մեր սրբազն հայրենիքը պաշտպանելու համար, պատրաստում ենք սպառման զանազան առարկաներ։ Ո՞վ գիտե, գուցե հենց այս գրչածայրի մեջ էլ, որով ես իմ ծոցատետում գրում եմ Ալավերդու պղնձի մասին, կա մի մասնիկ այդ պղնձից։

Ք Ա Ր Ե Ր Ը

Թիկնած գահավորակին՝ մենք երկար զրուցում էինք—ես և իմ ծանոթ ծերունի երկրաբանը։

— Ձեզ հետաքրքրում են Հայաստանի քարերը, — ասաց նա։ — Խնդրեմ։

Այս ասելով՝ երկրաբանը մատը մեկնեց սեղանին։ Կարմիր մահուդի վրա, շքեղ ափսեի մեջ ապակե մի սա-

փոր էր զրված։ Մալրամուտի շողերը թափանցելով նըրը ձևավոր պատերից՝ ագամանդի փայլ էին տվել ջրին։ Քառասուն աղբյուրների կենարար ջրին, որ հեռավոր լեռներից գալիս է Երևան։

Ես մի պահ ոչինչ չհասկացաւ։

— Դուք սափորն եք ասում։



Ալավերդի բանկի շենքը.

— Այս, սափորը, — պատասխանեց նա։ — Ահա ձեզ Հայաստանի ձևավոխված քարը։ Այդ սափորը պատրաստված է մեր պեմզայից։

Որ քարից զանազան պարագաներ են պատրաստում, ես այդ առաջ էլ գիտեի։ Բայց այս շենքը սափորը մեր պեմզայից։ Դա ինձ համար նորություն էր, ինչպես և այն, որ քարածուխից օծանելիքներ են ստացվում—զանազան դուխիներ և օդեկալոններ։

Բայց զա միակ հետաքրքրական բանը չէր, որի մա-

սին ասաց երկրաբանն ալդ երեկու Ողեռված նա պատմում էր Հայաստանի տուֆի և մարմարների մասին:

Վարդագույն գանձ,— ալդպես է անվանել մի բանաստեղծ տուֆը: Եվ իրոք՝ տուֆը գանձ է: Նալեցեք ձեր շուրջը և դուք կտեսնեք տուֆակերտ ինչքան շենքեր: Վարդագույն, կարմիր շենքեր: Շենքեր՝ դեղնավուն, կանաչ ու սև: Տուֆը թեթև է, հեշտ տաշվող, դիմանում է ցրտին ու տաքին, հեշտությամբ չի քալքայվում: Նրա զլսավոր հանքերը գտնվում են Արթիկում: Բայց տուփ կա Հայաստանի այլ վայրերում ևս—Երևանի մոտ, Վարդարշապատում, Կալինինովի շրջանում:

— Իսկ դուք գիտե՞ք իքս քարատեսակի մասին,— հարցը երկրաբանը:

— Ի՞քս, դա միթե հանրահաշվական անհայտը չէ, — իմ հերթին հարցը ես:

— Ալո՞: Բայց կա և իքս քարատեսակ: Նա գտնվում է Թումանյան գյուղի մոտ: Այժմ նրանից հրակայուն աղլուսներ են պատրաստում, որոնք դիմանում են մինչև 1760 աստիճանի տաքության: Դա պարզապես տուփի մի տեսակ է: Հողից իր մեջ ընդունելով զանազան լուծութեներ, նա զարձել է հրակայուն: Երբ հայտնի չէր նրա ինչ լինելը, անվանեցին իքս: Ալդպես էլ մնաց անունը:

Իսկ մեր բազմագույն մարմարները: Սաթի պես ու վղոսկը պես ճերմակ մարմարները, որ տեսել եք թանաքամանների տակ, մոխրագույն, բծավոր մարմարը, որ տեսել եք լվացարանների վրա, օնիքաները, որ շողում են մեր հոլաշեն տների պատերից, և էլի ու էլլ տեսակներ:

Երևանում, ուսանողական արվարձանում, մի փոքրիկ, գեղեցիկ պարտեզի մեջ, պատվանդանի վրա խրոխս կանգնել է երիտասարդ զինակիրը՝ Ղուկաս Ղուկասյանը:



Զ. Զուկասյանի արձանը Երևանում:

Նա Հայաստանի կոմերիտության հիմնադիրն էր։ Հիմա
Հուկասը չկա։ Նա ընկալ մեր կյանքի արևածագին։ Բայց
ժողովուրդն իր հիշողության մեջ պահում է նրա հիշա-
տակը։ Ուսանողական արվարձանում, պատվանդանի վրա
կանգնել է նա՝ կերտված Փամբակի գրանիտից։ Դա
Հայաստանի ընտիր քարերից է։ Փամբակի գրանիտից է
քարձրացել և օպերայի ու բալետի թատրոնի շենքը Ե-
րեվանում։ Գրանիտը մտնում է շարունակ նոր կառու-
ցումների մեջ։

Մեր երկիրը քարի երկիր է։ Քարի, որ մի ժամա-
նակ անեծք էր։ «Տարար՝ քարին քսեցիր», — ասում էին,
երբ ուզում էին պախարակել մի բան փչացնելու համար։
«Անունդ քարին զրվի», — ասում էին անեծքի ժամանակ-
այսինքն, թե՛ մեռնես։ Ելի անիծում էին։ «Քարին պառ-
կես»։ «Գլուխդ քարը», — ասում էին։ Եվ էլի շատ ու
շատ անեծքներ։

Եինականը նայում էր ամենի ժայռերին, նայում էր
ահավոր ծերպերին և մրմթնում։ «Անիծյալ քարաստան»։
Նա տրտնջում էր, որ իր երկիրը հարթ դաշտավայր չե,
ուր արտերն ավելի շատ կլինեին, բերքը՝ շատ։

Բայց հիմա «անիծյալ քարաստանը» նոր նշանա-
կություն է ստացել։ Պղնձաքարը պղինձ է տալիս։ Զան-
գեզուրում կա մոլիբդեն, որ մայրն է այլ թանկարժեք
մետաղների։ Զաջուռում արդյունահանվում է քարածուխ։
Արթիկում՝ տուֆ։ Անու հանքերը պենզա են տալիս, որ
նույնպես արժեքավոր շինանյութ է։ «Անիծյալ քարա-
ստանը» տալիս է մարմար և օնիքսներ։ Պենզայից և
կվարցիտներից ծնվում է ապակին։ Գրանիտից կերտ-
վում են հոյակապ կոթողներ։

Անդնդախոր ձորերում մոնչում են մեր լեռնային
գետերը։ Քարերն ունինդրում են նրանց և մեզմ ար-

ձագանք տալիս։ Ապա որոտում են գինամիտները և
տապալում ամենի ժայռերը։ Հետո գալիս է նոր կյանքի
որմնադիրը և ձև ու կերպարանք տալիս քարերին։

ԱՆՏԱՌԻ ԳԻՇԵՐԸ

Երկաթուղու կայարանը կուչ է եկել ահազին ժայ-
ոի տակ թվում է, թե բավական է մի թեթև ցնցում, որ
պոկիլի այդ գործ վիթխարի զանգվածը, ահավոր դղբե-
րյունով գլորվի ցած և ոչնչացնի կայարանը։ Բայց ոչ
գիտե, թե երբվանից նա մնում է այդպես լուս ու ան-
շարժ, մտախոհ ականջ գնելով գետի վշշոցին։

Սյատեղ վերջանում է մեր ուղերությունը գնաց-
քով։ Մազլցելով ժայռի կողերին և ըսնելով մացառնե-
րից, որ այնպես առատորեն բուսել են այստեղ, մենք
բարձրանում ենք վեր։ Եվ որքան բարձրանում ենք, այն-
քան ահավոր է դառնում ձորը։ Դեբետի միալար վշշո-
ցով։ Գետի այն ափին բարձրանում է ժայռերի մի այլ
շղթա։

Ակամա միաս են գալիս բանաստեղծի տողերը.

Այն կոտու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը խորունկ նոթերը կիտած,
Դեմ ու զեմ կանգնած համառ ու հանդարա,
Նայում են իրար հայացքով անթարթ։

Այժմ մենք գնում ենք այդ բանաստեղծի հայրենի
գյուղը՝ Թումանյան, իսկ զիշերն այնտեղից կձիավարենք
գետի Մոտկոր, որ հեռավոր, հնամենի անտառում ընկած
մի գյուղախումբ է։

Երբ ճանապարհը փոքրինչ հեշտանում է՝ հետզհետեւ

հորիզոնական դիրք ընդունելով, մեր ուղեկիցներից մեկը, մի ծեր թումանյանցի, ասում է:

— Կարդացել եք Գիքորի պատմությունը, մեր Ուհանեսի գրածը: Հրես՝ սա Գիքորի աղբյուրն է:

Մեր դեմ, իրոք, մի լեռնային կարկաչանոս աղբյուր կար: Այստեղ էր, որ Գիքորն ասավ, «Ապի, ծարավ եմ»: Եվ վերջին անգամ խմեց հայրենի անտառների սառնորակ ջուրը: Ահա և այն ծառը, որի մոտ ասավ. «Ապի, բեզարել եմ»: Ու նստեց հանգստանալու:

Այժմ Թումանյանն իր գեղեցիկ լեռնաշխարհով և այդ լեռնաշխարհի պես գեղեցիկ իր երկերով վերստին հմայել է մեզ: Հասնելով զյուղ, մենք ամենից առաջ այցի ենք գնում նրա հայրենական տունը: Ծանոթանում ենք բանաստեղծի հարազատներին, զրուցում երկար:

Բայց հեռավոր ճանապարհը գես սպասում է մեզ: Եվ երբ լիալուսինը հայտնվում է լեռան հետեւց, մենք վերսկսում ենք ուղևորությունը:

Երեք հոգի ենք—մի երիտասարդ բանաստեղծ, շրջանային բժշկուհին և ես: Գնում ենք ամեն մեկս մեր դործով: Զիերն ընթանում են հանդարտ, կողք-կողքի:

Բժշկուհին մեղմ երգում է: Իսկ երբ լուսմ է՝ բանաստեղծն է սկսում արտասանել: Ես ունկնդրում եմ նըրանց և անտառին, որ սվավում է մեր շուրջը:

Հետզինետե խորանալով անտառի մեջ՝ ճանապարհը նեղանում է: Այժմ մենք գնում ենք ոչ այնքան արահետով, որքան ենթադրությամբ: Եվ հանկարծ այդ արահետն ել անհետանում է: Այդպիսի գեղքերում ամենավատահելի ուղեցույցը ձիերն են: Մենք թողնում ենք սանձերը: Խըրտացնելով չոր սաղարթը՝ նրանք ընթանում են հանդիսաւ: Բայց նրանք էլ մոլորվել են. երբեմն տառում են դեպի ահավոր վիճի եզերքը և հանկարծ նկա-

տելով, ականջները խցում ու կանգնում: Երբեմն հասցընում են որևէ քառամայութիւնում:

Բժշկուհին անհանգստանում է:

— Ասացի, որ գիշերը չգանք: Դեռ լավ է, որ գայլեր չեն հանդիպում,—միխթարում է նա ինքն իրեն:

Մանը արկածներով անտառում հետու առաջ ենք գնում: Մեկ էլ՝ դեմք փովում է մի բացատ: Բացատներում ավելի հեշտ է կողմնորոշվել: Նայում ենք շրջապատը. ինչոր ձորի մեջ ենք դեմք բարձրանում է մի ահավին ժայռ: Նայում եմ վերև ու, — ինչ հրաշալիք, — տեսնում ժայռի կատարին մի քարայծ: Կանգնել է նայումնի շողերով ողողված և նայում է ձորին: Ընկերներս հիացել են:

— Բում...

Անեղ մի կրակոց ընդհատում է այդ պատկերը: Այժմամբ վեր է թոչում տեղից, մեկ էլ տապալվում, զլորվում ժայռի ստորոտը:

Հետ ենք նայում ու տեսնում մի կարճահասակ հըրացանավոր մարդու, որ դուրս գալով թագստոցից՝ մտենում է մեզ

— Բարնվ, — ասում է. — Ճամբորդ եք երևում, չընի՞ մոլորվել եք:

Ընդունելով բարեր, հայտնում ենք, որ, իսկապես, մոլորվել ենք: Նա բարությամբ ժպտում է և ավելացնում:

— Բան չկա, էս քշեր զոնաղ կմնաք որսկան Շաքարին, առավոտը ճամբեն շանց կտամ:

Մենք համաձայնվում ենք:

— Հենց էս ծառի տակն էլ նստեցեք, — ասում է նա ու ինքը հեռանում: Վերադառնում է կես ժամից հետո, որսած այծյամի տակ տնքալով: Իսկույն մաշկում է և խորոված սարքում:

ՄԵՆՔ ընդունում ենք որսորդի հյուրասիրությունը և ունկնդրում նրա պատմություններին։ Իր ամբողջ կյանքը Շաքարն անց է կացըել անտառում։ Խոսում է որսի մասին, անտառի ու նրա հարստությունների մասին։

— Օրհնված ա մեր անտառը, — ասում է նա, — ինչ ուզես՝ լիքն ա։ Էնքան եղնիկներ ու կիստարներ կան։ Դալաններն էլ քիչ չեն։ Իսկ թե քիչ բարձրանաս՝ մայրահավեր՝ ինչքան որ քեփդ տա։

— Իսկ մուֆլոններ նույնպես շատ են, — հարցնում է բանաստեղծը։

— Զէ, — պատասխանում է որսկանը. — Պրանց համար Դարալաղյաղ գնա, կամ վեղի։ Էնտեղ այծեր էլ շատ կան, կաքավներ էլ։

— Իսկ գաղաններ։

— Ինչքան ուզես. արջ կա, որ սարի չափ. գելն ու աղվեսը լավ մորթի ունեն։ Եղ գաղաններով հարուստ են մանավանդ Սևանի, Բայազետի ու Ղուկասյանի շրջանները։ Հեյ գիղի հա, — ավելացնում է որսկանը փոքրինչ ընդիշումից հետո, — տեղ չի մնացել, որ ոտք գրած չըլնեմ։

Զրույցը գեռ երկար շարունակվում էր։ Խոսում էինք առհասարակ անտառի հարստությունների մասին։ Փայտի մասին և ատաղձագործական արդյունաբերության։

Ես մտորում էի ծառերի մասին։ Ինչու մեզ մոտ ծառերը քիչ են։ Չե՞ որ մի ժամանակ նրանք շատ են եղել։ Մի անգլիացի ճանապարհորդ, որ 17-րդ դարում այցելել է Հայաստան, գրում է, թե ինքն աշխարհում չի տեսել ավելի գեղեցիկ անտառապատ ճանապարհ, քան այն ճանապարհը, որ Զաջուռից տանում է Դարաքիլիսա։ Այդ վայրերում այժմ ոչ միայն անտառ չկա, այլև ծառի ոչ

մի հետք։ Դարերի ընթացքում մարդը ոչնչացըել է այն Այդպես էլ ուրիշ վայրերում։ Բայց մեր գեղեցիկ երկիրն ինչքան ավելի գեղեցիկ կլիներ, եթե ունենար իր հին անտառները։

Եվ ահա՝ նոր մարդիկ, սովետական մարդիկ, վերականգնում են անտառները։

Մտքով ես տեղափոխվում եմ Երևան և նորից տեսնում նրա մերձակա լանջերի մատաղ ծառաստանը։ Ես տեսնում եմ ծառազարդվող մեր գյուղերն ու քաղաքները։ Նայում եմ դեպի մոտավոր ապագան և հրաշագեղ Սևանի ափերին տեսնում թափուտ անտառը։ Ու Սևանը դառնում է ավելի հրաշագեղ։ Ես տեղափոխվում եմ Կոմերիտմիության անվան լճակը՝ Երևանում։ Կապույտ, գեղեցիկ լճակի եղերքին դեպի հեռավոր հարթավայրերն ու բլուրներն է ձգվում ծառաստանը։ Նավակները թեթև սահում են ալիքների վրա։ Հարյուրավոր տղաներ ու աղջիկներ լողում, աղմկում են ջրերում։ Նրանց զվարթ ծիծաղը համակել է օդը։ Մարդիկ ճեմում են մերձակա ծառուղիներում։ Հետո, իջնելով լճափ, հանգատանում են շքեղ պավիլիոններում։ Այժմ դա մասամբ իրականություն է, մասամբ գեռ ծրագիր։ Բայց ծրագիր, որն արդեն իրականություն է գալնում։

Մինչդեռ մինք խոսում, մտածում էինք այդ ամենի մասին, անտառի վրա գալկանում էր երկինքը։ Հակինթ աստղերը հալվում, անհետանում էին։

— Դե, ժամանակն ա, — ասաց որսկան Շաքարը ու ինքն էլ ոտքի կանգնեց։ — Գնացեք էսպես, չծովեք, ճամբեն հետու չի։

Եվ ինքն անհետացավ անտառում։

ՄԵՆՔ ճանապարհ ընկանք։

Արևածագը մոտ էր։

ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐՈՎ

Գառնո արժանահիշատակ վայրերում մի քանի նըկաբներ անելուց հետո որոշեցի մի շաբաթ հանդիսա տալինձ զբունելով այս հրաշակերտ հովիտներում ու լեռներում։

Պատահում էր, որ բարձրանում էի լեռան ամենաբարձր կատարը, նստաւմ մի քարի և նայում դեպի Արարատյան գաշտը։

Արարատյան գաշտը...

Փովում էր իմ աչքերի դեմ նա իր տմբողջ հմայքով։ Նրա մայրական կրծքին տարածվել էին ճոխ այդեստանները։ Կարծես ես տեսնում էի արևահամ ողկույզներով ծանրաբեռնված խաղողի որթատունկերը։ Այստեղ ու այնտեղ՝ հեռու և մոտ՝ երեսում էին զյուղերը, որոնց վրա ամեն առավոտ ու երեկո տարածվում էր մեր հնօրյա օջախների ծուխը։ Հեռվում, դուրս գալով կաթնագույն մշուշից, արծաթե ժապավենի նման ձգված էր հովիտնական ճանապարհորդը—նվիրական Արաքսը։

Ես որոշեցի մնացած օրերն անցկացնել նրա ափերին։ Եվ հրաժեշտ տալով Գառնո լեռնաստանին՝ հետիոտն իջա դեպի Դամարլու։ Մի զիշեր հյուր մնացի Դարդալու գյուղում։ Եթե ուզում էր իմանալ, թե ի՞նչ է կոլտնտեսային հարստությունը, եկեք այստեղ։ Կոլտընտեսությունն ունի ընդարձակ այգիներ ու մըգաստաններ, մշակում է բամբակ, ցորեն, ունի անասնաբուծական խոշոր տնտեսություն։ Եվ ամեն տարի նա մի քանի միլիոն ոռոքու եկամուտ է ստանում։ Առատության

մեջ են ապրում կոլտնտեսականները՝ ազնիվ աշխատելով և շարունակ ավելի հարստացնելով իրենց տնտեսությունը։ Նրանք բարձր են պահում այն շքանշանի պատիվը, որ անցյալ տարի երկիրը փակցրեց իրենց կոլտնտեսության կրծքին։

Եղա Արտաշատում, Յուվայում, Նորաշենում։ Ամենուրեք նույն լիությունն է։ Ասես մի ձեռք առատության եղջյուրից բարիքներ է թափում ամեն մի ազնիվ աշխատավորի տունը։ Հարազատ պարտիայի ձեռքն է այդ, որ յուրաքանչյուրին մղում է աշխատանքային սխրագործության, յուրաքանչյուրին թև տալիս։

Ես տեսա բամբակի գաշտերը, որ ասես ճերմակ վարդաստան լինեին, տեսա մըգաստանները, եղա կոլտնտեսային մասաններում։ Ես տեսա նոր մարդկանց, որոնք հինավորց Արաքսի ափին ապրում են նոր կյանքով։

Եվ միտս եկան Արարատյան գաշտի հին նկարագրությունները։ «Այս առավոտ չկար հնաձավորը, չկար և հերկավարը։ Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ և անվաստակելի արորն անզործ ընկած էր գեռ չվերջացըրած ակոսների մոտ... Այդիները մնացել էին անխնամ, ագարակները կորցրել իրենց սիրելի բանվորներին։ Արել բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան Արարատյան ընդարձակ գաշտավայրը, որպես մի հսկայական բուրվառ, խնկարկում էր յուր վաղորդյան անուշնոտությունը... Ծխում էին և գաշտավայրի վրա խիտ առ խիտ սփռված գյուղերը։ Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ, կապտագույն ծուխին, որ ամեն առավոտ օճապտույտ սյունակներով վեր էր բարձրանում խրճիթների գմբեթածե երդիկներից... Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը... Եվ թանձր ծուխը նսեմացնում էր

Արարատյան գաշտի լուսապայծառ գեղեցկությունը... Ոչ
ոք չեր երևում: Ամենուրեք տիրում էր տխուր, անա-
պատական գատարկություն: Դատարկ էին քաղաքները,
դատարկ էին գյուղերը, դատարկ էին և ճանապարհները:
Ի՞նչ էր պատահել: Կարծես թե մի մահաբեր շունչ ան-
ցել էր այդ սքանչելի գաշտի վրայով, և մարդկային ա-
մեն արարած ոչնչացրել էր...»:

Դաժան թշնամու ձեռքն էր այդ, որ ոչնչացրել էր
մարդկային ամեն արարած: Բայց եկավ ազատարար Հոկտեմբերը: Նա խսպառ բնաջնջումից փրկեց հայ ժողովը՝
դիմ: Նա վերածնունդ բերեց երկրին: Ծաղկեց երկիրը:
Ծաղկեց և Արարատյան գաշտը, Հայաստանի ամենաար-
դասավոր հողը: Հարյուրավոր կոլտնտեսություններ կան
այժմ այդ հողի վրա: Նրանցից շատերը միլիոնատեր են:
Աշխատավոր մարդն սկսեց ապրել նոր կյանքով—ոչ
միայն ազատ, այլև ունեոր, կուտուրական կյանքով:

Եվ հորդեց համաժողովրդական ուրախությունը:

Ծիծաղեց դաշտը:

Ծիծաղեց և մայր Արաքսը՝ իր ափին տեսնելով հայ
աշխատավորի ազատությունը, որի հոգսը դարերով նա
կըռում էր:

ՖԵՆԻՔՍ

Եղել է հեքիաթային մի թոշուն: Նա ծիրանազույն
թեր ուներ: Արևելքից թուավ Եղիպտոս, բուն շինեց
Արևի տաճարում, այրվեց նրա մեջ՝ ինչպես խարույկի
վւա, և նորից վերածնվեց իր մոխիրից:

Այդ թոշունը Ֆենիքսն էր:



Դպրոցականներ

Հայ ժողովրդի մասին խոսելով, «Պրավդա» թերթը նրան նմանեցնում է այդ հեքիաթային թոշունին:

Մեր ժողովուրդը հասակ է առել անհանար մարտերում: Ինչպես Ֆենիքսը, նա էլ շարունակ վերածնվում էր մոխիրից, վերածնվում էր բոցից, որը, թվում է, սպառնում էր նրա գոյության հետքերն իսկ ոչնչացնելու:

Հայաստանի վրա հարձակվում էին անեն կողմից և ամեն ժամանակ: Ավերվում էին ննադարյան տաճարներն ու պալատները: Երկրի բնակչությունը ցիր ու ցան էր արվում ամբողջ աշխարհով մեկ: Հայկական խոսքը լուսում էր հայրենի երկրում: Բայց Ֆենիքսը կրկին վերածնվում էր: Կրկին ննչում էր Հայաստանի քնարը՝ բանաստեղծական խոսքն ու երաժշտությունը: Փայլում էին գեղանկարչության նոր գույները: Մթին խուցերում իմաստուները վերածողովում էին պատմության ցրիւտրված էջերը:

Վերջին անգամ հայ ժողովրդի Ֆենիքսը վերածնվեց 1920 թվի նոյեմբերի 29-ին: Նրա թեերն այլևս չեն այրվի: Դա նրա ընդուշտ վերածնումն էր: Ժողովուրդն ազատվեց դարավոր կապանքներից: Եվ ինչպես գարնանային ջրերը մեր հայրենի լեռներում, միանգամից հորդեցին նրա ստեղծագործության ակունքները: Շրջեցեք երկրի քաղաքներն ու դյուզերը և անեն քայլափոխում գուք կզգաք այդ մեծ վերածնունդը: Երկրում, ուր հավիտենական մոռացումի գիրկն են անցել կարիքն ու թշվառությունը, ծաղկում է կուլտուրան:

Հայաստանը դարձել է հանատարած գրագիտության երկիր: Յուրաքանչյուր երեք բնակչից մեկն այժմ սովորում է որևէ գլաբրոցում: Իսկ գլաբրոցները շատ են, ամեն գյուղում մեկը, հաճախ նաև երկուը: Ել ինչ խոսք քաղաքների մասին: Երեանն, օրինակ, հիսունից ավելի

մասսայական դպրոցներ ունի, ունի շատ ուսումնարաններ, իննը բարձրագույն դպրոց:

Երեանն ունի օպերայի և բալետի թատրոն, որի կուրծքը զարդարված է աշխարհում գոյություն ունեցող պարզեցներից առենամեծով՝ լենինի շքանշանով: Ունի գրամատիկական երեք թատրոն՝ հայկական, ոռոսական և աղբեցանական: Հապա պատանի հանդիսատեսի թատրոնը: Տիկնիկայինը: Հապա կինոները: Կրկեսը: Շրջանային թատրոնների ու կինոների, երգեցիկ խմբերի և այլ անսամբլների ցանցը, որ տարածված է ամբողջ Հայաստանում:

Իսկ զրադարանները: Երեանի հանրային զրադարանը, որ երկու միլիոն հատոր զիքք ունի: Քաղաքային զրադարանը: Մանկականը: Քաղաքի մյուս զրադարանները: Ընթերցարանների, կարմիր անկյունների, ակումբների և մասսայական զրադարանների ցանցը հասել է ամեն գյուղ ու ավան:

Բայց Երեանն ունի այլ հարստություններ ևս, որոնք հազվագյուտ են ամբողջ աշխարհում: Ես նկատի ունեմ պետական մատենադարանը, ուր պահվում են ձեռագրերը գեռ այն ժամանակներից, երբ գրքերը գրվում էին մագաղաթի վրա:

Հապա մեր թանգարանները—կերպարվեստի, գրականության, գավառագիտական, պատմության, երկրաբանական և այլ ու այլ թանգարանները:

Հապա աստղադիտարանը:

Հապա տասնյակ փորձակայաններն ու գիտական լաբորատորիանները:

... Անթիվ նյութերի կուտակում է ստեղծվել ուղեղիս մեջ: Վազուց ես մտածում եմ նրանց գեղարվեստական արտահայտության մասին: Ուզում եմ մի կտավի

Վրա պատկերել վերածնված հայ ժողովրդին՝ հեքիաթային մենիքսի կերպարանքով։ Ամեն անգամ, երբ մտածում եմ այդ մասին, քաղցր մի գող է համակռում ինձ. Երևանի ստեղծագործական ավյունը։ Շուտով ձեռնամուխ կլինեմ այդ գործին։ Ի՞նչ կստացվի, — դժվարանում եմ ասել...



Երևանի ինտերնացիոնալ մանկապարաեզրում։

Նկարիչ Արծրունու ծոցատերն ավարտվեց։ Դրանով կարելի էր վերջացնել և ամեն ինչ, եթե նախանցյալ օրը ես Արծրունուց նամակ չստանայի։ Առաջին նամակը Կալմիկ Բանակից։ Արծրունին այնտեղ նկարագրում է կյանքը սահմանագլխին, ուր ինքը ծառայում է։

Ներքեսում, ձորի մեջ, որոտում է գետը։ Գետի այն ափին արտասահմանն է։ Կանգնած է իր դետքում նկարիչ Արծրունին—կարմիր մարտիկը և հսկում է հայրենի երկրի սահմաններին, երկրի, որի հետ այսօր նա բոլորում է իր քսան տարին։

Նրանք միասին ծնվեցին՝ երկիրն ու մարդիկ։

Գնդակների շառաչուն տարափի տակ, երբ մեր բանակը մաքրում էր երկիրն անարդ տիրակալներից և քաղաքացիական կոփների հրի մեջ ծնվում էր նոր երկիրը, մեծ երկունքի այդ օրերին հազարավոր մանուկներ ծնվեցին։

Շատերը դեռ օրորոցում էին, երբ վերջին անգամ որոտացին ուումբերը։ Նրանց անուշ քունը գուցե գնդակների երգով ընդհատվեց և առաջին անգամ նրանք նայեցին շառագույն հորիզոնին։

Նրանք չհասկացան՝ դաշտերում թափված արյան փայլն էր այդ, որ ներկել էլ հորիզոնը, թե հին աշխարհն այրող հրդեհի բոցը։

Նրանք չհասկացան, որ աշխարհի վրա բացվում է նոր կյանքի առավոտը։

Բայց աճելով երկրի հետ, նրանք՝ երկրի հասակակիցները՝ դարձան նրա ակտիվ շինարարն ու պաշտպանը։

Իմ բարեկամ Արարատ Արծրունին մեկն է նրանցից։



Կազմը, տիտուլը, գլխագարդը և վերջնագարդը
նկարիչ Լեհ ապէի

Պատ-խմբագիր
Ն. Զարյան

Վֆ 1076. Պատվեր 734. Տիրաժ 3000.
Ստորագրված է տպագրության 17/XII—1910 թ.
Հայոցեառհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0148712

16134

ԳԻԱԸ 2 ՐՈՒԲ.

А. ДЕБЕНЦ
Окраски страны
Армгиз, Ереван, 1941